Պարոն Հ. Ղոսալմյանին
Տիկին Հ. Ղազարյանին

ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա.Սաֆարյանին

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

*Ա.Սաֆարյան*_____

«04» 10 2023թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի սեպտոմբերի 24-ից 30-ն ընկած ժամանակահատվածում Մոնտենեգրոյի Պոդգորիցա քաղաքում ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) և ԱՄՆ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների անդամների ազգային ասոցիացիայի (NARUC) կողմից կազմակերպված «Միջին կարիերայի կանանց առաջնորդության ծրագրի» 4-րդ խմբի դասընթացի մասնակցության

1. **Քաղաքացիական ծառայողների անունը, ազգանունը** – Աննա Ավանեսյան, Հասմիկ Հովհաննիսյան:
2. **Զբաղեցրած պաշտոնները** - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության գլխավոր մասնագետ, Իրավաբանական և լիցենզավորման վարչության գլխավոր մասնագետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները** - Պոտգորիցա, Մոնտենեգրո 2023 թվականի սեպտեմբերի 24-30-ը:

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)** - ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) և ԱՄՆ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների անդամների ազգային ասոցիացիայի (NARUC):
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)** - Մասնակցել ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) և ԱՄՆ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների անդամների ազգային ասոցիացիայի (NARUC) կողմից կազմակերպված «Միջին կարիերայի կանանց առաջնորդության ծրագրի» 4-րդ խմբի դասընթացին՝ էներգետիկայի բնագավառի կանանց հետագա մասնագիտական զարացումը խթանելու նպատակով:
6. **Քննարկված թեմաները (հարցերը)** - Միջոցառումը ուղղված էր վերապատրաստելու միջին կարիերայի կանանց՝ բարձրացնելու իրազեկության մակարդակը էներգետիկ ոլորտում գենդերային հավասարության կարևորության վերաբերյալ և ձևավորելու հմտություններ, որոնք կնպաստեն կանանց ընդհանուր առաջնորդական և կարիերում առաջխաղացման համար կարողություններին ձևավորմանը: Կարողությունների զարգացման այս նախաձեռնությունը ուղղված էր բարելավելու կանանց հմտությունները այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են գործարար կապերի և շփումների հաստատումը և բարելավումը, հրապարակային ելույթները, կարիերայի պլանավորումը, անձնակազմի և թիմի կառավարումը, բանակցությունները, մոտիվացիան և առաջնորդությունը, ինչպես նաև նախագծերի և ֆինանսական կառավարումը և այլն: Միջոցառման հիմնական թիրախը ոչ միայն ներգրաված կանանց կարիերայի առաջընթացի նպաստել էր, այլև մասնակիցներին համախմբելն էր երիտասարդ կին աշխատակիցներին կարիերայի զարգացման գործընթացին նպաստելու գործընթացում:
7. **Հանդիպումները, ելույթները**

Օր առաջին: Մասնակիցներին ներկայացվել է կարիերայի զարգացման հիմանական ուղիները և հաղորդակցման հմտությունների բարելավման հիմնական ուղղությունները: Քննարկվել են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ կարիրերայի զարգացման թիրախների սահմանումը, կարիերիայի պլանավորման մեթոդները, սահմանված նպատակին հասնելու համար անհրաժեշտ անձնական զարգացման և մասնագիտական գործոնների պլանավորման հիմնական միջոցները, շնորհանդեսների (պրեզենտացիա) ձևավորման և ներկայացման մեթոդները, կարիերայի նպատակներ սահմանելու, կարիերայի զարգացման հիմնական մեթոդաբանությունը: Ներկայացված տեսական թեմաներով մասնակիցների կողմից կատարվել են գործնական առաջադրանքներ:

Կարիերայի զարգացման իրենց փորձով են կիսվել ծրագրի ղեկավար Կլեր Նովակը, NARUC-ի կամավորներ, հանձնակատարներ Մեգան Գիլմանը և Վալերի Լեմմին:

Օր երկրորդ: Քննարկվել են առաջնորդության գերազանցություն, առաջնորդական գիտելիքների, հմտությունների և կարողությունների բացահայտման հիմնական ուղիները, առաջնորդության գործընթացում առկա արգելքները և դրանց հաղթահարման ուղիները, գործնական և անձնական կյանքում մոտիվացիայի գործոնների բացահայտման և դրանց կիրառման հմտությունները, թիմերի կառավարման հուզական կողմերը, հրապարակային ելույթների կազմակերպման առանձնահատկությունները և զարգացման ուղիները: Մասնակիցներին հնարավորություն է ընձեռնվել գործնական առաջադրանքների միջոցով կատարելագործել վերը նշված հմտությունը:

Օր երրորդ: Ներկայացվել է գործարար հմտությունների կատարելագործման հիմնական ուղիները, բանակցությունների վարման մեթոդաբանությունը, գործարար կապերի շրջանակների վերլուծության սկզբունքները, և դրանց հաստատաման և զարգացման մեթոդները: Մասնակիցներին հնարավորություն է ընձեռնվել սիմուլացիոն մոդելների միջոցով կատարելագործել իրենց բանակցային

հմտությունները, ինչպես նաև ներկայացնել գործնական կապերի հաստատման իրենց տեսլականը և դրանց զարգացման հիմնական մոտեցումները:

Գործարար կապերի հաստատման իրենց փորձով են կիսվել հանձնակատարներ Մեգան Գիլմանը, Վալերի Լեմմին և Էլեն Գիլլին:

Օր չորրորդ: Ուսումնասիրվել են բիզնեսի ռազմավարության մշակման հիմնական սկզբունները և մեթոդները, ռազմավարության քարտեզերի ձևավորման մեթոդաբանությունը, արդյունքերի գնահատման հիմնական ցուցանիշները: Անրադարձ է կատարվել ֆինանսական կառավարման հմտությունների ձևավորման կարևորությանը, ներկայացվել են հաշվետվությունների ձևավորման հիմնական սկզբունքները և դրանցում ներառված ցուցանիշների կիրառման կարևորությանը՝ հետագա որոշումների կայացման գործընթացում: Մասնակիցների կողմից կատարվել են բիզնես ռազմավարության ձևավորման, ռազմավարական քարտեզի մշակման և ֆինասական հաշվետվությունների վերլուծության գործնական առաջադրանքներ:

Օր հինգերորդ: Վերապատրաստման այս հատվածը ուղղված էր մասնակիցների մոտ նախագծերի կառավարման (project management) հմտությունների ձևավորմանը և կատարելագործմանը: Մասնավորապես, քննարկվել են նախագծերի ձևավորման փուլերը, դրանց կառավարման սկզբունները, ներկայացվել են նախագծերի հիմանական բաղադրիչները, առաջնայնությունների ձևավորման, պարտականությունների բաշխման, արդյունքների գնահատման հիմնական մեթոդները, ինչպես նաև առաջնորդության դերը նախագծերի կառավարման գործընթացում: Մասնակիցների կողմից կատարվել է նախագծերի ձևավորման և արդյունքների գնահատման գործնական առաջադրանքներ:

Գենդերային ծրագրի ղեկավար Ալիսա Ռուսսոյի և ծրագրի անդամ Էլեն Գիլլի կողմից ներկայացվել են նախագծերի կառավարման անձնական փորձը, առկա մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղիները:

Այնուհետև, մեր պատվիրակության յուրաքանչյուր մասնակից՝ համաձայն տրված առաջադրանքի ներկայացրել է կարիերայի զարգացման իր թիրախները,

առաջնահերթությունները և դրանց հասնելու հիմանական ուղիները: Միջոցառման ավարտին մասնակիցներին հանձնվել են մասնակցության վկայականներ:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Դասընթացի ավարտից հետո մասնակիցներին կնշանակվի մենթորներ, որոնք կուղղորդեն մասնակիցների հետագա մասնագիտացման, զարգացման և կարերիայի առաջընթացին ուղղված աշխատանքները: Մենթորները ընտրվելու են NARUC-ի կին հանձնակատարիներց/ավագ անձնակազմի փորձագետների կամավորների խմբից՝ Հյուսիսային Ամերիկայից և ԵՄ-ից, որոնց հետ հանդիպում է նախատեսում ամբողջական վերապատրաստման 6 ամսյա գործընթացը ավարտելուց հետո: Նախատեսվում է, որ մասնակիցները և մենթորները պետք է կիսվեն միմյանց փորձով և քննարկեն փոխադարձ մարտահրավերներն ու պոտենցիալ լուծումները իրենց մասնագիտական կյանքում, ինչպես նաև ուսումնասիրեն իրենց աշխատանքային և անձնական կյանքի միջև կապերն ու դրանց ազդեցությունը հետագա մասնագիտացման առաջխաղացման գործընթացի վրա:

Գործուղվող ---------- 04.10.2023թ. ---------- ***Ա. Ավանեսյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 04.10.2023թ. ---------- ***Հ. Հովհաննիսյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՁՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հրաման 780-ԳՔ, 04.09.2023թ.

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
Հասմիկ Հովհաննիսյան, իրավաբանական և լիցենզավորման վարչության լիցենզավորման բաժնի գլխավոր մասնագետ
Աննա Ավանեսյան, ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության ֆինանսական վերլուծության բաժնի գլխավոր տնտեսագետ
(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը՝ Պոդգորիցա /Մոնտենեգրո/

5. Գործուղման ժամկետները՝ 24.09.2023-30.09.2023թթ.

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Հասմիկ Հովհաննիսյան*	*Աննա Ավանեսյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)			
	Ավիատոմսի արժեքը (դրամ)			
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)			
	Օրերի քանակը			
	Ընդամենը (դրամ)			
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)			
	Օրերի քանակը			
	Ընդամենը (դրամ)			-
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			
	Այլ ծախսեր (*նկարագրել*)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		-		-

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը փոփ. 23.03.23 N 326-Ն)

02.10.2023թ.